ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 704
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 05/05/234-20
«12» 02 2020թ.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փաստաբան Տիրայր Վարդազարյանը 07.02.2020թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատին, խնդրելով պարզաբանել, թե արդյոք փաստաբանի համար պարտադիր է դատական նիստի ընթացքում վստահորդի շահերը պաշտպանելու համար ներկայացնել արտոնագրի պատճենը, եթե փաստաբանը ներկայացրել է լիազորագիր և ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրված վկայական:

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջները հայտնում ենք հետևյալը.

«Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:*

«Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի նախագահը տրամադրում է **փաստաբանի** և փաստաբանի օգնականի **վկայականներ**:*

Վերը նշված իրավական կարգավորումներից բխում է, որ վկայական տրվում է բացառապես փաստաբանին և փաստաբանի օգնականին:

«Փաստաբանության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի օգնականն իր **ինքնությունը** հաստատում է փաստաբանի օգնականի վկայականով, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը:* Այս կարգավորումից բխում է, որ վկայականը հանդիսանում է նաև ինքնությունը հաստատող փաստաթուղթ: Հետևաբար, այս նորմը հակասում է ՀՀ կառավարության՝ «Անձը հաստատող փաստաթղթի մասին» 22 դեկտեմբերի 1999

թվականի N 767 որոշման պահանջին, քանի որ կառավարության որոշմամբ թվարկված՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերի սահմանափակ ցանկում ներառված չէ վկայականը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:*

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ 1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը...:*

Թեև «Փաստաբանության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասում կարգավորվել է միայն փաստաբանի օգնականի վկայականի հետ կապված հարաբերությունը, սակայն վկայական տրամադրելու նպատակը և վկայականի իրավական ազդեցությունը նույնն է նաև փաստաբանի դեպքում[1]:

Վերոգրյալից ելնելով, գտնում ենք, որ փաստաբանի վկայականը հաստատում է փաստաբանի ինքնությունը և փաստաբան հանդիսանալու կարգավիճակը:

Հ.Գ. Այս մոտեցումից բացառություն կարող է սահմանվել միայն դատավարական օրենքներով ուղղակի նշված դեպքերում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

[1] Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին....